

Այդ ժամանակին համար ասիկա անսովոր ձև մը չէր: Էջմիածնի կաթողիկոսը ունէր մէկէ աւելի աթոռակիցներ: Կիլիկիա նմանապէս: Երուսաղէմ ևս նոյն ձևով երբեմն կառավարուած էր: Կ. Պոլիս նոյնպէս, եթէ ոչ նոյն՝ գէթ անոր մօտ ձևեր ընդգրկած էր:

Գրիգոր վրդ. Կեսարացի ալ իր ծնընդավայրէն բացակայութեան շրջանին համար այս գրութիւնը կիրարկած կը թուի, Մարտիրոս անուն եպիսկոպոս մը իրեն օգնական առնելով, ինչպէս կը հասկցուի Շարահնոցի մը յիշատակարանէն, ուր կ'ըսէ թէ «անկ եղևայ կասարեցաւ սա ի մայրաքաղաքս Կապադոկիայ, որ է Կեսարիայ Հայքն առաջին եւ միւս անունն որ է Մաշակ: Ընդ հովանեաւ սուրբ Սարգսի եւ սուրբ Ասուածանի եւ այլ սրբոց, որ սա կան ի օգնութիւն քրիստոնէից: Արդ գրեցաւ սա ձեռակաւ անարժան գրչի Յակոբ քահանայարի եւ ի քիսկանութեանս սուրբ հայկազան տուարի ՌԾԷ (= 1608) մայիս ամսոյ ԻԶ. արև ԵՂ. ի եւ ի կաթողիկոսութեանս Սայ Տեառն Յովհաննիսի եւ յառաջնորդութեան քաղաքիս քաջ եւ արիւրաբունապետին Գրիգոր վարդապետի եւ Մարտիրոս եպիսկոպոսին» (Տաշեան, Մայր Յուլի, էջ 525-526):